ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

11 սեպտեմբերի 2014թ. թիվ 607-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության կարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետը, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի ներդրման գործողությունների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՖՆ 001342

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2014թ. սեպտեմբերի 11-ի թիվ 607-Ա հրամանի

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

2 ԱՌԱՆՁԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 5

2.1 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄ 5

2.2 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՀԱՍՏԱՏՈՒՄ 5

2.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄՇԱԿՈՒՄ 6

2.4 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 6

2.5 ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ և ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ 7

2.6 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՎ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ 8

2.7 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ 9

2.8 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԿԱՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐՈՒՄ 9

3 ԱՌԱՆՁԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 10

3.1 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՀԱՍՏԱՏՈՒՄ 10

3.2 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ և ԴՐԱՆՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ (ԱՆԱԼԻՏԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ) ԿԱԶՄՈՒՄ 11

3.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 12

3.4 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՈՒՏՔԻ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ 12

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ 13

3.6 ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱԼԻՏԻԿ և ՍԻՆԹԵՏԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 13

3.7 ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄ և ԱՌԱՆՁԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ 13

4 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ 14

4.1 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ ՄՇԱԿՈՒՄ 14

4.2 ՎԵՐԱՀՍԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ, ՈՐՈՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

4.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԿԱՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 15

5 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ և ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ: 15

5.1 ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ և ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ 15

5.2 ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ 15

5.3 ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ 16

6 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 16

1 Ներածություն

1.1.1 Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ), հաշվապահական հաշվառման հաշվային պլանի (հաշվային պլան), ինչպես նաև դրանք ներդնելու համար «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն մշակված հաշվապահական հաշվառման այլ իրավական ակտերի (այսուհետ՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգ) ներդրման գործողությունների պլանը (այսուհետ՝ Գործողությունների պլան) մշակվել է՝ ելներով ՀՀՀՀՍ-ի պահանջներից և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի նախագծերի փորձնական ներդրման (պիլոտավորման) աշխատանքների վերաբերյալ» հաշվետվությամբ ներկայացված՝ պիլոտավորման արդյունքները:

1.1.2 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգը ներդրվելու է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրային հատվածի կազմակերպություններում:

1.1.3 Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման գործողությունների պլանը ներառում է հետևյալ միջոցառումները.

1. նախապատրաստական միջոցառումներ առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար.
2. ներդրման միջոցառումներ առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար.
3. նախապատրաստական միջոցառումներ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար.
4. համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

1.1.4 Առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման նախապատրաստական միջոցառումները ներառում են՝

ա) հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար պատասխանատու անձանց սահմանում.

բ) հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում.

գ) հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման ուղեցույցի մշակում.

դ) հանրային հատվածի առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգով վարելու համար համակարգչային ծրագրի ձեռքբերում.

ե) հաշվապահների, ինչպես նաև շահագրգիռ այլ մասնագետների վերապատրաստումների անցկացում.

զ) հանրային հատվածի կազմակերպություններին հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով և հաշվապահական հաշվառման ուղեցույցով ապահովում.

է) հանրային հատվածի կազմակերպություններին համակարգչային տեխնիկայով և հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրով ապահովում.

ը) հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման հետ կապված համապատասխան ստորաբաժանումների ստեղծում:

1.1.5 Առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցառումները ներառում են՝

ա) հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի մշակում և հաստատում.

բ) հանրային հատվածի կազմակերպություններում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և դրանց գույքային (անալիտիկ տվյալների) ցուցակների կազմում.

գ) հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների, ներդրումային գույքի, կենսաբանական ակտիվների, չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվների, բարձրարժեք ակտիվների, ռազմավարական պաշարների իրական արժեքով գնահատում.

դ) հանրայի հատվածի կազմակերպություններում մուտքի հաշվեկշռի պատրաստում.

ե) հանրային հատվածի առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ներդրում.

զ) ակտիվների և պարտավորությունների անալիտիկ և սինթետիկ տվյալների մուտքագրում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր.

է) նոր համակարգով հաշվապահական հաշվառման վարում և առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

2 Առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման նախապատրաստական միջոցառումներ

2.1 <u>Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար պատասխանատու անձանց սահմանում</u>

2.1.1 Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է հանրային հատվածի կազմակերպությունների համապատասխան ղեկավար մարմիններում (նախարարություններ, գերատեսչություններ, կառավարչական այլ հիմնակներ, ինչպես նաև համայնքի ղեկավարի աշխատակազմեր) սահմանված կարգով նշանակել պատասխանատուներ: Յուրաքանչյուր պատասխանատու պետք է կոորդինացնի և ղեկավարի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը՝

ա) տվյալ ղեկավար մարմնում.

բ) տվյալ ղեկավար մարմնի համակարգում գտնվող կառավարչական մարմիններում.

գ) տվյալ ղեկավար մարմնի ենթակայության տակ գտնվող պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններում:

2.2 <u>Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում</u>

2.2.1 Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերը ներառում են.

ա) Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը (այսուհետ՝ ՀՀՀՀՍ):

Նշված ստանդարտի մշակումը և հետագա փոփոխությունները պետք է իրականացնի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

բ) ՀՀՀՀՍ-ի հիման վրա մշակված հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը:

Հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

գ) հանրային հատվածի կազմակերպության ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը (ներառյալ գույքագրման ցուցակները):

Ներկայումս գործում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի N 102 հրամանով հաստատված «Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը».

դ) ՀՀՀՀՍ-ի հիման վրա մշակված կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը, որը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

ե) ՀՀՀՀՍ-ի հիման վրա մշակված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը, ներառյալ հաշվետվությունների լրացման ցուցումները:

Օրինակելի փաթեթը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

զ) սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի և (կամ) պարտադիր ձևերը:

Նշված փաստաթղթերը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

է) նոր հիմնական միջոցների նորմատիվային օգտակար ծառայություններ՝ համաձայն ՀՀՀՀՍ-ի 11-րդ «Հիմնական միջոցներ» բաժնի պահանջների:

Նշված փաստաթղթերը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը.

2.3 Հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման ուղեցույցի մշակում

2.3.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի հիման վրա պետք է մշակվի և հաստատվի հաշվապահական հաշվառման ուղեցույց: Ուղեցույցում առնվազն պետք է ներառված լինեն հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելում ընդգրկված գործառնությունների և դեպքերի հաշվապահական հաշվառման մոտեցումները և դրանց հաշվապահական ձևակերպումները: Ուղեցույցը պետք է մշակի և հաստատի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը:

2.4 Հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ձեռքբերում

2.4.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի հիման վրա հանրային հատվածի առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները

պատրաստելու համար պետք է ձեռքբերվի համակարգչային ծրագիր: Նշված համակարգչային ծրագիրը պետք է բավարարի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի նկատմամբ սահմանված պահանջները[1]:

2.5 Հաշվապահների և շահագրգիռ այլ մասնագետների վերապատրաստումների անցկացում

2.5.1 Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահների, ինչպես նաև այլ շահագրգիռ մասնագետների վերապատրաստումները անցկացնելու համար նշված մասնագետները բաժանվում են առնվազն հետևյալ մասնագիտական խմբերի՝

I մասնագիտական խումբ.

ա) հաշվապահներ, որոնք աշխատում են միայն առանձին ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպություններում.

բ) ներքին աուդիտորներ, որոնք աուդիտ են իրականացնում առանձին ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպություններում.

գ) շահագրգիռ այլ մասնագետներ, ովքեր ներառված չեն երկրորդ մասնագիտական խմբում:

II մասնագիտական խումբ.

ա) հաշվապահներ, որոնք աշխատում են համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպություններում (նախարարություններ, համապատասխան գերատեսչություններ, կառավարչական այլ հիմնակներ).

բ) հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի մասնագետներ, որոնք իրականացնում են հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի մշակումներ.

գ) պետական մարմինների գլխավոր ֆինանսիստներ.

դ) ներքին աուդիտորներ, որոնք աուդիտ են իրականացնում համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպություններում.

ե) ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակիցները:

2.5.2 Վերոնշյալ՝ 2.5.1 կետում նկարագրված յուրաքանչյուր մասնագիտական խմբի համար պետք է մշակվեն առանձին վերապատրաստման ծրագրեր: Վերապատրաստման ծրագիրը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալ բաժիններից՝

---

[1] Պահանջները մշակվել և ներկայացվել է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի նկատմամբ սահմանվող պահանջների և սարքավորումների տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ» հաշվետվությամբ:

ա) հաշվապահական հաշվառման հիմունքներ,

բ) հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտեր, ներառյալ՝

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ: Ընդ որում, յուրաքանչյուր մասնագիտական խմբի ծրագրում կներառվի ՀՀՀՀՍ-ի այն բաժինները, որոնք առավել կիրառելի են տվյալ խմբի մասնագետների կողմից: Օրինակ. երկրորդ մասնագիտական խմբի ծրագրում կներառվի ՀՀՀՀՍ-ի 9-րդ՝ «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» բաժինը, որը չի ներառվի առաջին մասնագիտական խմբի ծրագրում:
- հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ,
- հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթ,

գ) համակարգչից օգտվելու ընդհանուր հիմունքներ և հանրային հատվածի կազմակերպությունների համար ձեռքբերված հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր:

Վերապատրաստման ծրագրերը պետք է մշակվեն հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից: Վերապատրաստման ծրագրերով ուսուցման տևողությունը պետք է բավարար լինի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման և այդ համակարգով հետագայում աշխատելու համար մասնագետներին բավարար գիտելիքներով ապահովելու համար:

2.5.3 Վերապատրաստման ծրագրերի հիման վրա պետք է իրականացվի հաշվապահների և այլ շահագրգիռ մասնագետների վերապատրաստումներ: Վերապատրաստումները պետք է անցկացվեն հաշվապահական հաշվառման բնագավառում բավարար փորձառություն ունեցող մասնագետների կողմից: Ընդ որում, վերապատրաստման ծրագրի հիման վրա վերապատրաստող մասնագետները պետք է մշակեն թեստեր (անհրաժեշտության դեպքում նաև խնդիրներ) դասընթացների ավարտից հետո վերապատրաստված մասնագետների վերապատրաստման դասընթացներում ձեռք բերված գիտելիքներն ստուգելու համար:

2.6 <u>Հանրային հատվածի կազմակերպություններին հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով և հաշվապահական հաշվառման ուղեցույցով ապահովում</u>

2.6.1 Հանրային հատվածի կազմակերպություններին անհրաժեշտ է ապահովել՝

ա) հաշվապահական հաշվառումը կարգավորող առնվազն հետևյալ իրավական ակտերով՝

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք.
- հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ.
- հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ.
- կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթ.
- կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդել.

բ) հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղեցույց:

2.7 Հանրային հատվածի կազմակերպություններին համակարգչային տեխնիկայով և հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրով ապահովում

2.7.1 Հանրային հատվածի կազմակերպություններին անհրաժեշտ է ապահովել՝

ա) համակարգչային տեխնիկայով (ներառյալ տպիչ սարքով), որը կունենա հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ներդրման և շահագործման համար բավարար պարամետրեր.

բ) հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրով:

2.8 Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման հետ կապված համապատասխան ստորաբաժանումների ստեղծում կամ գոյություն ունեցող ստորաբաժանումները համապատասխան մասնագետներով համալրում

2.8.1 Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը մշակելու, հետագայում դրանցում փոփոխություններ կատարելու և բարելավելու համար, ինչպես նաև հանրային հատվածի կազմակերպություններին մեթոդական օժանդակություն ցույց տալու համար նպատակահարմար է հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնում ձևավորել նշված գործառույթները իրականացնող ստորաբաժանում կամ գոյություն ունեցող համապատասխան ստորաբաժանումներից որևէ մեկին փոխանցել նշված գործառույթները և այդ ստորաբաժանումը համալրել համապատասխան մասնագետներով:

2.8.2 Նախարարությունների, գերատեսչությունների, կառավարչական այլ հիմնակների, ինչպես նաև համայնքի ղեկավարի աշխատակազմերի հաշվապահական հաշվառման համար պատասխանատու ստորաբաժանման գործառույթներում ներառել տվյալ համակարգում գտնվող կառավարչական մարմիններում և պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման և հետագայում վարման հետ կապված մեթոդաբանական օժանդակության գործառույթը:

2.8.3 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հասույթները և ծախսերը, ինչպես նաև պետության այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնք ենթակա չեն հաշվառման հանրային հատվածի այլ կազմակերպությունների կողմից (օրինակ՝ պետության անունից թողարկված պարտատոմսերը, տրամադրված վարկերը, տրամադրված երաշխիքների գծով առաջացած պարտավորությունները և այլն) հաշվառելու նպատակով հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնում ձևավորել նշված հասույթների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվառումը իրականացնող ստորաբաժանում կամ գոյություն ունեցող համապատասխան ստորաբաժանումներից որևէ մեկին փոխանցել նշված գործառույթները և այդ ստորաբաժանումը համալրել համապատասխան մասնագետներով: Նշված ստորաբաժանումը հետագայում պետք է պատրաստի նաև պետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

3 Առանձին կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցառումներ

3.1 <u>Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի մշակում և հաստատում</u>

3.1.1 Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերը առնվազն ներառում են՝

ա) կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Յուրաքանչյուր կազմակերպություն սույն գործողությունների պլանի 2.2.1 կետի «դ» ենթակետում նշված՝ կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա պետք է սահմանի իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չպետք է հակասի ՀՀՀՀՍ-ի որևէ պահանջի: Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մշակում է տվյալ կազմակերպությունը: Անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը կարող է օժանդակություն ստանալ 2.8 կետում նշված համապատասխան մարմիններից: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաստատում է կազմակերպության ղեկավարը, այն համաձայնեցնելով համապատասխան պետական մարմնի հետ:

բ) կազմակերպության աշխատանքային հաշվային պլանը: Յուրաքանչյուր կազմակերպություն, սույն գործողությունների պլանի 2.2.1 կետի «բ» ենթակետում նշված՝ ՀՀՀՀՍ-ի հիման վրա մշակված հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և դրա կիրառման հրահանգի հիման վրա պետք է սահմանի իր աշխատանքային հաշվային պլանը՝ ելնելով իր գործառնությունների բնույթից: Յուրահատուկ գործառնությունների հաշվառման նպատակով կազմակերպությունները, անհրաժեշտության դեպքում, կարող են աշխատանքային հաշվային պլանում ներառել լրացուցիչ առաջին կամ

երկրորդ կարգի հաշիվներ՝ օգտագործելով հաշվային պլանի հաշիվների ազատ ծածկագրերը: Կախված կազմակերպության կողմից իրականացվող գործառնությունների, նրա վրա ազդող այլ դեպքերի և իրադարձությունների տարբեր տեսակների վերաբերյալ առավել մանրամասն (անալիտիկ) տեղեկատվության արտացոլման անհրաժեշտությունից, կազմակերպությունները կարող են իրենց աշխատանքային հաշվային պլանում երկրորդ կարգի հաշիվներին կից բացել տարբեր մակարդակների ենթաանալիտիկ հաշիվներ:

գ) **կազմակերպության կողմից իրականացվող գործառնությունների և այլ դեպքերի փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ուղեցույցը:** Յուրաքանչյուր կազմակերպություն սույն գործողությունների պլանի 2.2.1 կետի «գ» ենթակետում նշված՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի և (կամ) պարտադիր ձևերի հիման վրա պետք է սահմանի իր փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ուղեցույցը: Ուղեցույցը մշակում է տվյալ կազմակերպությունը: Անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը կարող է օժանդակություն ստանալ 2.8 կետում նշված համապատասխան մարմիններից: Ուղեցույցը հաստատում է կազմակերպության ղեկավարը.

դ) **կազմակերպության հաշվապահական հաշվառման ուղեցույցը:** Յուրաքանչյուր կազմակերպություն սույն գործողությունների պլանի 2.3.1 կետի նշված՝ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղեցույցի հիման վրա պետք է սահմանի իր հաշվապահական հաշվառման ուղեցույցը: Ուղեցույցը մշակում է տվյալ կազմակերպությունը: Անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը կարող է օժանդակություն ստանալ 2.8 կետում նշված համապատասխան մարմիններից: Ուղեցույցը հաստատում է կազմակերպության ղեկավարը:

3.2 <u>Հանրային հատվածի կազմակերպություններում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և դրանց գույքային ցուցակների (անալիտիկ տվյալների) կազմում</u>

3.2.1 Հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպությունում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման ամսաթվի դրությամբ պետք է իրականացվի կազմակերպության բոլոր ակտիվների և պարտավորությունների գույքագրում, այդ թվում՝

ա) կազմակերպության կողմից վերահսկվող ակտիվների գույքագրում.

բ) կազմակերպության պարտավորությունների գույքագրում.

գ) կազմակերպության հավատարմագրային կառավարման տակ գտնվող ակտիվների գույքագրում.

գ) գործառնական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների, պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների, վերամշակման ընդունված նյութերի, տեղակայման ընդունված սարքավորումների, որպես գրավ պահվող ակտիվների գույքագրում.

դ) պայմանական պարտավորությունների և պայմանական ակտիվների գույքագրում.

ե) գրավադրված ակտիվների, խիստ հաշվառման բլանկների, պարբերական և մասնագիտական գրականության, հանրային հատվածի այլ կազմակերպությունների կողմից վերահսկվող ակտիվների գույքագրում:

3.2.2 Գույքագրումը պետք է իրականացվի 2.2.1 «գ» ենթակետի համաձայն մշակված գույքագրման անցկացման կարգի համաձայն: Գույքագրման արդյունքներով պետք է կազմվի կազմակերպության բոլոր ակտիվների և պարտավորությունների գույքային ցուցակներ (անալիտիկ տվյալներ):

3.2.3 Գույքագրումը պետք է իրականացվի կազմակերպության աշխատակիցների և/կամ հրավիրված մասնագետների կողմից:

3.3 Հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների իրական արժեքով գնահատում

3.3.1 Հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպությունում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման ամսաթվի դրությամբ պետք է իրականացվի կազմակերպության կողմից վերահսկվող հիմնական միջոցների, ներդրումային գույքի, կենսաբանական ակտիվների, չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվների, բարձրարժեք ակտիվների, ռազմավարական պաշարների գնահատում: Գնահատումը պետք է իրականացվի իրական արժեքով:

3.3.2 Վերոհիշյալ 3.3.1 կետում նշված ակտիվների իրական արժեքը որոշվում է ՀՀՀՀՍ-ի համապատասխան բաժիններում իրական արժեքի որոշման համար սահմանված մոտեցումների համաձայն: Գնահատումը պետք է իրականացվի համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից:

3.4 Հանրային հատվածի կազմակերպություններում մուտքի հաշվեկշռի պատրաստում

3.4.1 Հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպությունում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման ամսաթվի դրությամբ պետք է կազմվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (մուտքի հաշվեկշռի): Հաշվետվությունը կազմվում է 3.2.2 կետի համաձայն կազմված ակտիվների և պարտավորությունների գույքային ցուցակների (անալիտիկ տվյալների) հիման վրա: Ընդ որում հիմնական միջոցները, ներդրումային գույքը, կենսաբանական ակտիվները, չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվները, բարձրարժեք ակտիվները, ռազմավարական պաշարները հաշվի են առնվում 3.3 ենթաբաժնի համաձայն գնահատված իրական արժեքով, իսկ ֆինանսական գործիքները՝

համապատասխանաբար ամորտիզացված արժեքով, իրական արժեքով կամ սկզբնական արժեքով:

3.4.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը (մուտքի հաշվեկշիռը) կազմում է կազմակերպությունը: Այն հաստատում է կազմակերպության ղեկավարը:

3.5 Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ներդրում

3.5.1 Մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգով հաշվապահական հաշվառման վարումը յուրաքանչյուր կազմակերպությունում պետք է ներդրվի (տեղակայվի) 2.4.1 կետի համաձայն ձեռքբերված հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիրը և ձևավորվի անալիտիկ և սինթետիկ հաշվառման բոլոր տեղեկատուները: Նշված աշխատանքները իրականացվում է սահմանված կարգով ընտրված մասնագիտական կազմակերպության կամ 2.8 կետում նշված համապատասխան մարմինների կողմից:

3.6 Ակտիվների և պարտավորությունների անալիտիկ և սինթետիկ տվյալների մուտքագրում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր

3.6.1 Հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների անալիտիկ և սինթետիկ տվյալները մուտքագրվում են 3.5.1 կետի համաձայն ներդրված հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր: Ընդ որում, համակարգչային ծրագիր մուտքագրվող ակտիվների և պարտավորությունների անալիտիկ տվյալները պետք է համապատասխանեն 3.4.1 կետի համաձայն կազմված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը (մուտքի հաշվեկշիռը) պատրաստելու համար հիմք հանդիսացած անալիտիկ տվյալներին:

3.6.2 Հաշվի առնելով յուաքանչյուր կազմակերպության առանձնահատկությունները, ինչպես նաև նրա կողմից իրականացվող գործառնությունները, հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրում պետք է մշակվեն անհրաժեշտ տիպային ձևակերպումների բանաձևեր (շաբլոններ), որոնց միջոցով հնարավորինս կավտոմատացվեն տնտեսական գործառնությունների հաշվապահական ձևակերպումները:

3.6.3 Վերը նշված 3.6.1 և 3.6.2 կետերում նախատեսված աշխատանքները իրականացվում է սահմանված կարգով ընտրված մասնագիտական կազմակերպության կամ 2.8 կետում նշված համապատասխան մարմինների կողմից:

3.7 Նոր համակարգով հաշվապահական հաշվառման վարում և առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

3.7.1 Այն կազմակերպությունները, որոնք 3.1–3.6 ենթաբաժինների համաձայն իրականացրել են հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում, ներդրման ամսաթվից սկսած պետք է հաշվապահական հաշվառումը վարեն և ֆինանսական հաշվետվությունները պատրաստեն հաշվապահական նոր համակարգով:

3.7.2 Այն կազմակերպությունները, որոնք 3.1–3.6 ենթաբաժինների համաձայն իրականացրել են հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում, ներդրման ամսաթվից սկսած պետք է գանձապետական նշանակության հաշվետվությունները (հիմնականում Ձև Հ-2 և Ձև Հ-4) պատրաստեն հաշվապահական նոր համակարգից ստացված տեղեկատվության հիման վրա: Անհրաժեշտության դեպքում հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմինը պետք է ներկայացնի գանձապետական նշանակության հաշվետվություններում փոփոխություններ կատարելու առաջարկություններ՝ գանձապետական հաշվետվությունները հաշվապահական նոր համակարգի հետ համահունչ դարձնելու համար:

4 Նախապատրաստական միջոցառումներ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար

4.1 Հանրային հատվածի կազմակերպությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար համախմբման ընթացակարգերի ձեռնարկի մշակում

4.1.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի հիման վրա պետք է մշակվի և հաստատվի համախմբման ընթացակարգերի ձեռնարկ: Համախմբման ընթացակարգերի ձեռնարկը պետք է անդրադառնա ինչպես համախմբման հետ կապված մեթոդաբանական հարցերին, այնպես էլ ներառի համախմբման իրականացման գործնական ուղեցույցներ:

4.2 Վերահսկող կազմակերպությունների ցանկի հաստատում, որոնք պարտավոր են ներկայացնել համախմբված ֆինանսական հաշվետվություններ

4.2.1 Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը պետք է սահմանի այն վերահսկող կազմակերպությունների ցանկը, որոնք իրենց հերթին հանդիսանալով վերահսկվող կազմակերպություններ, պարտավոր են ներկայացնել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Նշված ցանկը հաստատելիս հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը հաշվի է առնում՝

ա) արդյոք առկա են վերը նշված վերահսկող կազմակերպությունների (որն իր հերթին հանդիսանում է վերահսկվող կազմակերպություն) համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներ, թե այդ օգտագործողների տեղեկատվական կարիքները բավարարվում են ավելի բարձր մակարդակի վերահսկող կազմակերպության կողմից պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններով: Օրինակ. ֆինանսական տեղեկատվության օգտագործողների տեղեկատվական կարիքները կարող են բավարարվել պետության՝ որպես մեկ ամբողջության, համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջոցով,

բ) նախկինում ձևավորված փորձը:

4.3 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի հիման վրա հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագրի մշակում կամ ձեռքբերում

4.3.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի հիման վրա պետք է մշակվի կամ ձեռքբերվի հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագիր, որը կապահովի ինչպես առանձին ֆինանսական հաշվետվությունների, այնպես էլ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը: Համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքը պետք է մշակվի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան փորձագետների:

5 Հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագրի ներդրում և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

5.1 Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստող հաշվապահների և շահագրգիռ այլ մասնագետների վերապատրաստումների անցկացում

5.1.1 Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստող հաշվապահների, ինչպես նաև շահագրգիռ այլ մասնագետների վերապատրաստման ծրագիրը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալ բաժիններից՝

ա) համախմբման ընթացակարգերի ձեռնարկ,

բ) հանրային հատվածի կազմակերպությունների համար մշակված կամ ձեռքբերված հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագիր:

5.1.2 Վերապատրաստման ծրագիրը պետք է մշակվի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից: Վերապատրաստման ծրագրով ուսուցման տևողությունը պետք է բավարար լինի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար բավարար գիտելիքներ ձեռքբերելու համար:

5.1.3 Վերապատրաստման ծրագրի հիման վրա պետք է իրականացվի հաշվապահների և այլ շահագրգիռ մասնագետների վերապատրաստումներ: Վերապատրաստումները պետք է անցկացվեն Հաշվապահական հաշվառման բնագավառում բավարար փորձառություն ունեցող մասնագետների կողմից:

5.2 Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագրի ներդրում

5.2.1 Հանրային հատվածի կազմակերպություններում պետք է ներդրվի (տեղակայվի) 4.3.1 կետի համաձայն մշակված կամ ձեռքբերված հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագիրը և ձևավորվի անալիտիկ և սինթետիկ հաշվառման

բոլոր տեղեկատուները: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման տեղեկատուները պետք է ձևավորվեն՝ ելնելով հանրային հատվածի կազմակերպություններում 3.5.1 կետի համաձայն ներդրված հաշվապահական համակարգչային ծրագրում առկա տեղեկատվությունից՝ հաշվապահական հաշվառման միասնական համակարգչային ծրագրի ներդրման ամսաթվի դրությամբ:

5.3 Նոր համակարգով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

5.3.1 Հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմնի կողմից 4.2.1 կետի համաձայն կազմված ցանկում ընդգրկված վերահսկող կազմակերպությունները պետք է 6-րդ բաժնում նշված ժամանակացույցի համաձայն պատրաստեն համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

5.3.2 Անհրաժեշտության դեպքում համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար կներգրավվի սահմանված կարգով ընտրված մասնագիտական կազմակերպություն:

6 Հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույց

6.1.1 Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման գործող համակարգից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցումը իրականացվում է հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան: